

գիրս կամաւն Մատուծոյ . որ հակառակի , ոստին նորա Մատուած է և իւր սուրբքն : Մնասնի տօնին մին օր ժամ Յովաստի միակեցին կատարի կամու մեծին Հասանայ :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ազգային քաղաքք արդէն փութացին ծանուցանել հասարակութեան Ս. Միտոյս միաբան Մամուտայի Յարութիւն վարդապետի վրայօք եղած ամբաստանութիւնը , որ քանի մի քրքւածադեւաց աշխարհական միաբանից թեւադրելով փորձ փորձած էր թունաւորել զՍ. Իսահակ Սրբազան եպիսկոպոսը : Սոյն դէպքս Մեն. Սրբազան Պատրիարք Հայրը լսելուն անմիջապէս յանձնաժողով մի կազմեց և յանձնեց անոր որ քննութիւն ըլլայ , և ճշմարտութիւնը յայտնուի : Սոյն միջոցներուն թէ Յարութիւն վարդապետը և թէ իւր արքանեակները բանտարկուած էին , և քննութիւնները ըմննալէն յետոյ Յարութիւն վարդապետը սուրբ Փրկչայ վանքը խրկուեցաւ , որ քաղաքէս դուրս է , և յատուկ հսկողութեան տակ դրուեցաւ . իսկ իւր դուակից աշխարհական միաբանները քշուեցան թէ Ս. Միտոէս և թէ քաղաքէս :

Աւասիկ յանձնաժողովոյն բրտած քննութեանց տեղեկագիրք :

Մենապատիւ Սրբազան Հայր :

Չեր Սրբազնութիւնը՝ որ ի ներկայութեան Տնօրէն խորհրդոյ քննիչ Սաննաժողովոյս յանձնած էր Յարութիւն վարդապետի , Սարաջի դպիր Պօղոսի , Սեբաստացի Վէորգի և Բաղնիցի Սուրատին վրայ յայտնուած հարցուփորձը :

Սաննաժողովս 1866 , դեկտեմբեր 6 էն սկսեալ մինչեւ 1867 փետրուար 13 , 11 նիստերով կատարեց իւր պաշտօնը , որոյ արգիւնքը սոյն վերջին տեղեկագրովս կրնե՞րկայացունէ Չեղ տե՛նագրութենէն քաղելով :

Սաննաժողովոյս պաշտօնը 1866 , դեկտեմբեր 2 երեկոյին դպիր Պօղոսի սենեկի պատին վրայ փակած պարսաւագրոյն հեղինակը գտնել և անոր պարունակութիւնը քննելն էր : Եւ զովս պէտք եղած հետազօտութիւններն ընելով , թղթոյն հեղինակը նոյն իսկ Պօղոսն ըլլալը տուագեց . (տես արձանագրութիւն երես 10 .) և երբ Պօղոսն իւր գրած ամբաստանութիւնները (ուր քանի մը անմեղներ զրպարտուած էին) , իմացաւ որ անկարելի էր հաստատել ինքզինք արդարացունելու նպատակաւ , Սեբաստացի Վէորգին զՍահակ Սրբազանը թունաւորելու խորհուրդը յայտնեց , որոյ քննութեան հետեւութիւններն են՝

Ա. Վէորգը Յարութիւն վարդապետին թեւադրութեամբ յանուն Սահակ Սրբազան Հօր և մէկ քանի վարդապետաց բարոյականին դէմ յանցանքներով լեցուն պարսաւագիր մը փակուցած է կոշնակին վրայ , զոր կարգացած է Մեղրիանուպօլսեցի Ստեփան վարդապետը . (արձ. եր. 7 և 15) :

Բ. Յարութիւն վարդապետին խրատով Վէորգն զՍահակ Սրբազանը թունաւորելու փորձ կը փորձէ Սուրատին ձեռօք . որոյ հաւատարմութեամբ չի յաջողիր . ըստ որում Սուրատը երկու անգամ թոյնը Վէորգին ձեռքէն առնելով կը սանի Պօղոսին կը յանձնէ իրը հաւատարիմ սարսաւորի , և տեսնելով որ գործը չի յայտնուիր , երբորդ և չորբորդ անգամին եւս առնելով Վէորգին ձեռքէն , կ'ուզէ թէ Չեր Սրբազնութեան և թէ Սա

հակ Սրբազանին լուր տալ, որ կ'որդիլուի սպասուորներէն. (արձ. եր. 10, 13, 14 և 16):

Գ. Սառաջի Պօղոսը 11 աւուր մէջ երկու անգամ զՍահակ Սրբազանը կը թռնաւորէ, առաջինը չորթան սպուրի մէջ լեցուցած ըլլալուն ջիններդործեր, ուստի երկրորդ անգամ արգանակի ջուրի մէջ դրած է եղեր, և այս ոճիւրդ դործելուն պատճառ եւ բեմն Սահակ Սրբազանի ծանր յանգի մանութեանց չի կրնալ տանիլը և եւրբեմն ալ առաւելագոյն շահու ախրն կարութեամբ Պատրիարքարանի սպասաւորութեան մոնելու փախաբը կը դնէ ըստ իւր գրաւոր վկայութեան:

Դ. Յարութիւն վարդապետը իւր վրայ ստուգուած յանցանքները խոտաւանելէն վերջը Սխառնութեան մէկ քանիններուն վրայ յանցանքներ դրնելով, այլ և այլ տարածայնութեանց առիթ եղած է ըստ իւր գրաւոր վկայութեան:

Ե. Սանաժողովն այս ամեն քիննութեանց մէջ զՍուրատը անմեղ կը գտնէ այս բոլոր նենգութեանց խաղաղակիչն ըլլալուն համար:

1867 Փետրուար 14:

Ստաթիկոս վարդապետ Եղաթեանց:

Սկրիպտ վարդապետ Եղիաթեանց:

Բարձրագիմնոս վարդապետ:

Յարութիւն Յ. Զեմիրճեան:

Կրթաւոր Յ. Եաջընեան:

Մայիս 24 ին յառանգաւորաց դպրոցի հոյակապ սրահին մէջ տարեկան քննութեան առթիւ պարգեւաբաշխութեան հանգէսը կատարուեցաւ. որ ինչպէս յայտնի է, ի սրատիւ և ի յիշատակ Սրբոց Սարգանանց որոշուած է ամեն տարի նոյն օրը կատարելու: Այլ թէպէտ ամայս 23 ին էր հան-

դէսին յատկացեալ օրը, սակայն նոյն օրը քաղաքիս կուսակալ Սեմախյոյ Իգնէթ Փաշան չկրնալ գալուն, հետեւեալ օրուան մնաց: Շքեղ էր արդարեւ աղգային հանգէտ, ուր ոչ միայն կառավարիչ Փաշայն, այլ և զօրաց Սեմախյոյ խիստ Փաշան և ուրիշ քանի մի բարձրաստիճան անձինք ներկայ գտնուեցան, իսկ հանդիսիս մէջ քանի մի հայերէն ծառեր և մէկ տաճիկէն բանախօսութիւն մի կարգացուեցաւ, և աղգային երգեր խօսուեցան ի մեծ հաճութիւն բոլոր հանդիսու կանայ:

Նշակերտաց խօսեցած ծառերը զատ տպուելով, իւրաքանչիւր բաժանորդ իրաւունք ունի մէկ մէկ օրինակ ձրի ստանալու:

Սուրախ եմք ծանուցանելու հասարակութեան Գեր. Յակոբ Ապիսկոպոսի եռանդուն ազգասիրութիւնը՝ զոր չընագացած տեղուանքը ցոյց կուտայ, այցելութիւն ընելով եկեղեցեաց և առաւելապէս վերաբանայ, որոց վերայ ընդունած տեղեկութիւնները կը փութամք հասարակութեան հազորդել յուրախութիւն սրտի:

Տիգրանակերտ հասնելուն և առաջին անգամ փարձատուն այցելութեան գնալուն առթիւ, տեղեյն ուստեմնական փարձապետը Ս. Կարապետ Սարգսեան ընտիր ծառախօսութիւն մի կ'ընէ ընկերական սիրոյ վերայ, բնաբան տանելով իրեն Փրկչի մէկ պաւտուէրը որ ըսաւ. «Պատուիրանն նոր տամ ձեզ, զի սիրեալք զմիմեանս որպէս ես սիրեցի զձեզ»: Արով կ'ուզէ եղբակացընել թէ իւրաքանչիւր անհատ իրբեւ քրիստոնեաց պարտաւոր է իւր ընկերին և հետեւապէս իւր ազգին բարւոյն և օգտին համար զը-

Հոգութիւններ յանձն առնուլ, և լոստ օրինակի Փրկչին՝ դնել իւր անձը աղ- գին հոգեւոր, բարոյական և մտաւո- բական փրկութեանը վերայ, ազատել զանկիւց բարոյական ախտից և մտաւոր կուրութեան և խաւարին տգի- տութեան գերութենէն : Այն ճառս զոր առ երկարութեան զանց կ'ընեմք մէջ բերելու, մեծ ազդեցութիւն ը- բած է ներկայ եղող անձանց :

Գարձեալ ուսումնարանի աշակերտ ներէն 16 տղայք առանձին ուղերձներ ու շնորհակարութեան ճառեր ուղղած են նորին Գերապետութեան, և տա- րեգիւնին առթիւ բոլոր աշակերտաց կողմէ ճառ մի կը կարդացուի հանդի- ոյ մէջ . բոլոր այս բանախօսութեանց մէջ դիտողութեան արժանի են տղա- յոց ուսումնական եռանդը, և բա- րեարշտական վսեմ՝ զգացմունքները :

Տիգրանակերտի մէջ երկու եկե- ղեցեաց անուամբ երկու ուսումնա- րան կան մանչ տղայոց, այն է սուրբ Կիրակոսի և սուրբ Սարգսի : Ընդ- նոյն մէջ 49 տղայք կան ուսմունք տր- վող, այսինքն քերականութիւն, որ- բանբանութիւն, ճարտասանութիւն և թուարանութիւն . և 217 տղայք այբբենարանէն սկսեալ մինչեւ շարա- կան դաս առնող : Սուրբ Կիրակոսի թաղը ունի նաեւ օրտոգաց համար յառուկ վարժարան մի, ուր տեղ 120 աղջկուհի աշակերտք հասարակ ըն- թերցանութեան մէջ կը վարժուին : Իսկ սուրբ Սարգսի թաղին ուսումնա- րանին վերայ ուրիշ անգամ յոյս ու- նիմք տեղեկութիւն հաղորդել : Հի- մնիւ հիմայ կը յաւելում ըսել թէ Գեր. այցելութիւն ներկայութիւնը մեծ շարժում պատճառած է բոլոր պը- տրասած աղջային վարժարաններուն ուսման ընթացից մէջ, և իւր յաճախ այցելութեամբ և հարցաքննութիւն

ներաւ բոլոր աշակերտք նոր եռան- գով վստաւած իրենց մտաւոր կարու- զութեան տահմանը ընդարձակելու յոյս կը ցուցնեն : Ըմեն կիրակի, կ'ը- սէ նամակագիրը, սուրբ եկեղեցւոյ արձակմանէն յետոյ բոլոր աշակերտք և երեւելի աղջայինք ուսումնարանին մէջ ժողովուելով քննութեան հան- գէսներ կու տան, բաղդրածայն եր- զօք ընկերացեալ, և ամին անգամու Գեր. այցելուն եւս հոն գտնուելով իւր յորդորիչ խօսքերովը միշտ կը բա- ջալերէ թէ զաշակերտներն և թէ հան- գիսաւոր աղջայնոց խումբը :

Գեր. Յակոբ Սրբազան եպիսկո- պոսը նոյեմբեր ամսոյն Ըրզնն եւս եր- թալով, բարձրահայեաց սուրբ Ըս- տուածածնի վանուց միտքան Ըրժ . Յովհաննէս վարդապետի և բոլոր տե- ղացւոց խնդրանք Ըկըլ գիւղաքաղա- քի սուրբ Ըշան անուն եկեղեցին կ'օ- ծէ, որ ութ տարիէն 'ի վեր է շինուի- լը և առանց օծութեան կը մնար . այն առթիւ ութ մանկանց եւս դպրու- թեան աստիճան կու տայ : Ըկըլք ա- առանձին յայտարար գրով մի իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն թէ եկեղեցւոյն օծմանը համար և թէ նո- րին Գերապետութեան այս պատ- ճառաւս ամենեւին նուէր մի չընդու- նելուն :

Այն եկեղեցիս ուխտառեղի եղած է, ուր տեղ կը գտնուի եղեր մեծկակ կտոր մի այն տաշտին, որուն մէջ ա- մենօրհնեալ Արքայ իւր մանուկ Յիսու- սը լուացած է, կ'ըսեն :

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Սուրբ Ըթոռս պարտք կը համարի իւրեան Սիօնի միջոցաւ ծանուցանել քանի մի գաղթական և բաղդախնդիր պատանեաց դէպքով մի իսուրբ Ը-